Բարև՛, սիրելի՛ ընկեր Մարիանա,

Ես Նազիմն եմ, խաղաղության վերաբերյալ քո մտքերը կարդալիս շատ գեղեցիկ զգացողություններ ունեցա: Միանում եմ խաղաղության մասին քո մտքերին և ուզում եմ քեզ կարճ պատմել խաղաղության վերաբերյալ իմ պատկերացումների մասին: Ես 20 տարեկան, շրջագայել սիրող մի երիտասարդ եմ: Ինձ համար խաղաղ աշխարհն այն է, որտեղ կարող եմ այցելել ցանկացած երկիր: Ցավոք, այսօրվա իրավիճակում ո՛չ ես կարող եմ այցելել քո երկիրը, ո՛չ էլ դու կարող ես այցելել իմ երկիրը:

Երբ կարդում էի քո տատիկի՝ Շամքիրում և դրանից հետո ապրած կյանքի պատմության մասին, մեկ անգամ ևս համոզվեցի, թե որքան նման են մեր կյանքերն ու ճակատագրերը:

Պապիկս և նրա ընտանիքը 1965 թ. Ճամբարակից (Կրասնոսելսկ) տեղափոխվել են Բաքու: Երբ ես փոքր էի, նա ինձ հաճախ էր պատմում իր հայաստանցի դասընկերների, ծառայակից ընկերների մասին: Պատմում էր միասին խաղացած խաղերի, ճաշակած ուտելիքների մասին: Թեև հայրս ծնվել է Ղուբադլուի շրջանում,

1992 թ. որպես ներքին տեղահանության ենթարկված անձ՝ ստիպված էր հաստատվել Սումգայիթում: Անգամ այս նամակը գրելիս նա պատմում էր, թե ինչպես էին Հագարի գետի ափին հայաստանցի ընկերների հետ խորոված պատրաստում: Սա ինձ համար ոգևորող պատճառ է, որպեսզի հակամարտությունը շուտ կարգավորվի՝ խաղաղ ճանապարհով:

Ես էլ կցանկանայի հակիրճ ներկայացնել ինձ: Ուսանող եմ. ապագա միջազգայնագետ: Այս գործընթացը գուցե 50 տարի հետո լինի, սակայն եթե երկու ժողովրդի միջև դիվանագիտական
հարաբերություններ հաստատվեն, ես կլինեմ այն անձանցից մեկը, որը սիրով կաշխատի ապագա դեսպանատանը:

Գուցե մտքերս չկարողացա արտահայտել երկար և հարուստ նախադասություններով, սակայն ուզում եմ՝ իմանաս, որ ես էլ խաղաղություն եմ ուզում նույնքան, որքան դու:

Մնաս խաղաղությամբ՝

Նազիմ